

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա Մակարդակ

1) Նկարում n ը տառով է պատկերված արլ. ե. 45° միջօրեականը.

- 1) Դ
- 2) Բ
- 3) Ա
- 4) Գ




2) Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 250 000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.

- 1) 1 սմ–ում՝ 2,5 կմ
- 2) 1 սմ–ում՝ 250 կմ
- 3) 1 սմ–ում՝ 2500 կմ
- 4) 1 սմ–ում՝ 25 կմ

3) Նկարում Գ կետի ազիմուտը հավասար է.

- 1) 135°
- 2) 315°
- 3) 45°
- 4) 225°



4

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արեգակի ճառագայթները հս. լ. 25° -ի տակ տարվա մեջ մեկ անգամ ընկնում են ուղղահայաց:
- 2) Հունիսի 22-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 3) Մարտի 21-ը կոչվում է գարնանային գիշերահավասարի օր:
- 4) Դեկտեմբերին ցերեկը Հարավային բևեռում ավելի կարճ է, քան Երևանում:

5

Երկրի խորքից հրահեղուկ զանգվածի, ջրային գոլորշիների և գազերի դուրս մղումը Երկրի մակերես կոչվում է.

- 1) գեյզեր
- 2) երկրաշարժ
- 3) հրաբուխ
- 4) ցունամի

6

Լուսնի և Արեգակի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացումը կոչվում է.

- 1) ալեբախություն
- 2) մակընթացություն
- 3) ալեկոծություն
- 4) տեղատվություն

7

Բնութագրումով որոշել տեղումների տեսակը.

Դա առաջանում է տարվա ցուրտ, անհողմ եղանակներին, պարզկա (անամպ) գիշերներին, երբ Երկրի մակերևույթի և օդի ջերմաստիճանը 0° -ից ցածր է: Տեղումների n ը տեսակն է.

- 1) կարկուտը
- 2) ցողը
- 3) ձյունը
- 4) եղյամը

8


Օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի չափումներից ստացել են -1° , -4° , -7° , -13° , $+7^{\circ}$, $+12^{\circ}$, $+9^{\circ}$, $+3^{\circ}$ ցուցանիշները: Ջերմաստիճանի տատանման օրական լայնությունը կկազմի.

- 1) 25°
- 2) 1°
- 3) 12°
- 4) 10°

9

Նկարում F տառով նշված է.


- 1) միջնապատյանը
- 2) նստվածքային շերտը
- 3) բազալտային շերտը
- 4) գրանիտային շերտը



10

Նկարում n° թվով է նշված ամենաբարձր մթնոլորտային ճնշումը.

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3



11

«Օովածոց — օվկիանոս» գույգերից ընտրել սխալը.

- 1) Կալիֆոռնիական — Խաղաղ
- 2) Գվինեական — Ատլանտյան
- 3) Օմանի — Հնդկական
- 4) Բոտնիկական — Հյուսիսային սառուցյալ

12

Տունդրայի զոնան բնորոշվում է.

- 1) սեզոնային կլիմայով, ամռանը թափանցող հասարակածային, իսկ ձմռանը՝ արևադարձային օդային զանգվածներով, բուսականության մեջ բարձրացողուն (2–3 մ) հացազգիների և ծառերի գերակշռությամբ
- 2) տարեկան ցածր ջերմաստիճաններով, քիչ տեղումներով, որոնք հիմնականում թափվում են ձյան տեսքով, ցածրահասակ բուսականությամբ
- 3) ցամաքային կլիմայով՝ տաք ու խոնավ ամառով, ցուրտ ձմեռով, հումուսով հարուստ (մինչև 8–12%) սևահողերով
- 4) խիստ չոր ցամաքային կլիմայով, օրական և տարեկան ջերմաստիճանների մեծ տատանումներով, շատ աղքատ բուսականությամբ՝ չորադիմացկուն տեսակներով

13

Բնութագրումով որոշել գետը.

Հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞ր գետն է.

- 1) Օբ
- 2) Վոլգա
- 3) Ենիսեյ
- 4) Մակենզի

14

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհագրական երկայնությունը քարտեզում կամ գլոբուսի վրա կետի հեռավորությունն է սկզբնական միջօրեականից՝ արտահայտված աստիճաններով:
- 2) Հասարակածը ամենակարճ գուգահեռականն է:
- 3) Քարտեզում և գլոբուսի վրա հասարակածին գուգահեռ տարված գծերը կոչվում են միջօրեականներ:
- 4) Միջօրեականի 1° աղեղի երկարությունը կազմում է 114 կմ:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում օդը կատարում է վարընթաց շարժում:
- 2) Հասարակածից բևեռներ շարժվելիս Արեգակից ստացվող ջերմության քանակը նվազում է:
- 3) Երկրագնդի վրա առանձնացնում են մթնոլորտային ցածր ճնշման չորս և բարձր ճնշման երեք գոտիներ:
- 4) Մթնոլորտային ցածր ճնշման գոտիներում լինում են առատ տեղումներ:

16

«Գետ — ջրվեժ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Մարանիոն — Բգուասու
- 2) Չուրուն — Անխել
- 3) Ջամբեզի — Վիկտորիա
- 4) Կոնգո — Լիվինգստոնի

17

«Մայրցամաք — թերակղզի» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) Ավստրալիա — Յուկատան
- 2) Աֆրիկա — Առնհեմլենդ
- 3) Եվրասիա — Բալկանյան
- 4) Հյուսիսային Ամերիկա — Սկանդինավյան

18

Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային գոտու Խաղաղօվկիանոսային ափերի կլիման.

- 1) մուսսոնային է
- 2) չոր մերձարևադարձային է
- 3) խոնավ մերձարևադարձային է
- 4) միջերկրածովային է

19

Քարտեզում *Գ* տառով *ո՞ր* գետն է նշված.

- 1) Տիգրիս
- 2) Եփրատ
- 3) Արաքս
- 4) Ինդոս



20

Քարտեզում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.

- 1) Հորդանան
- 2) Սիրիա
- 3) Լիբանան
- 4) Իսրայել

21

Ո՞րն է ճիշտ բնութագրում «ժողովրդագրական ճգնաժամը».

- 1) բնակչության թվի կայունացումը պարզ վերարտադրության պայմաններում
- 2) բնակչության թվի աճը մահացության կրճատման հետևանքով
- 3) բնակչության թվի կայուն նվազումը նեղացված վերարտադրության պայմաններում
- 4) բնակչության թվի կայուն աճը ընդլայնված վերարտադրության պայմաններում

22

Բնակության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.

- 1) բնակչության բնական շարժ
- 2) տարաբնակեցում
- 3) բնակչության միգրացիա
- 4) բնակչության տեղաբաշխում

23

Բնութագրումով որոշել պետությունը.

«Մեծ յոթնյակ»-ի անդամ այս պետությունն ըստ պետական կարգի պառլամենտական հանրապետություն է: Հարուստ է մարմարի ու սնդիկի պաշարներով: Երկրում բարձր է ուրբանիզացման մակարդակը, սակայն ի տարբերություն այլ եվրոպական երկրների՝ այստեղ շատ չեն խոշորագույն քաղաքները: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Մեծ Բրիտանիան
- 2) Իտալիան
- 3) Ֆրանսիան
- 4) Գերմանիան

24

Երկրի բնակչության թիվը կազմում է 365 600 մարդ, ծնելիության գործակիցը՝ 5‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.

- 1) 2028 մարդ
- 2) 1828 մարդ
- 3) 1628 մարդ
- 4) 1980 մարդ

25

Ընտրել «ժողովուրդ — լեզվախումբ» համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------------|---------------|
| 1. ֆրանսիացիներ | ա. իրանական |
| 2. անգլիացիներ | բ. սլավոնական |
| 3. ուկրաինացիներ | գ. գերմանական |
| 4. տաջիկներ | դ. ռոմանական |

- 1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 2) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
- 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

26

Դեպի Սև ծով ելք ունեցող երկիր է.

- 1) Մոլդովան
- 2) Ռումինիան
- 3) Հունաստանը
- 4) Ադրբեջանը

27

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) պողպատ — մետաղաձուլություն
- 2) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
- 3) պլաստմասսա — մեքենաշինություն
- 4) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն

28

Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Երկրի խոշոր նավահանգիստներից են Ստամբուլը, Իսթենդերունը և Իզմիրը:
- 2) Բորատի և քրոմիտի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է:
- 3) Սև մետաղաձուլության խոշոր կենտրոնը մայրաքաղաք Անկարան է:
- 4) Տնտեսության ավանդական զարգացած ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:

29 «Կեղծ ուրբանիզացումը» առավել բնորոշ է.

- 1) Իսրայելին և Բելգիային
- 2) ԱՄՆ-ին և Ֆրանսիային
- 3) Բրազիլիային և Արգենտինային
- 4) Ճապոնիային և Շվեդիային

30 Ներցամաքային երկրներ են.

- 1) Արգենտինան և Բրազիլիան
- 2) Եգիպտոսը և ՀԱՀ-ը
- 3) Հնդկաստանը և Մյանման
- 4) Բոլիվիան և Պարագվայը

31 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ներկայումս համաշխարհային էներգետիկան իր զարգացման ամփային փուլում է:
- 2) Աշխարհի խոշորագույն ջերմաէլեկտրակայանը Ռուսաստանում է:
- 3) Ջերմաէներգետիկան համաշխարհային էլեկտրաէներգետիկայի առաջատար ճյուղն է:
- 4) Աշխարհի խոշորագույն ջրաէլեկտրակայանը կառուցված է Ենիսեյ գետի վրա:

32 Ջրաէներգետիկ ռեսուրսներով սակավ ապահովված երկրներն են.

- 1) Թուրքիան և Հնդկաստանը
- 2) Ալժիրը և Չադը
- 3) Ռուսաստանը և Նորվեգիան
- 4) Կանադան և Բրազիլիան

33 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավային լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է Արփայի գոգավորությունը:
- 2) Սևանա լիճն արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
- 3) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բագումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթա:
- 4) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:

34 ՀՀ–ում քիմիական արդյունաբերության զարգացման կարևոր նախադրյալ չէր.


- 1) սև մետաղների ներմուծումը
- 2) պղնձաձուլության պրոցեսում անջատված գազերը
- 3) քիմիական արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկը
- 4) բնական գազի ներմուծումը

35 Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) պանրի արտադրությունը
- 2) գինու–կոնյակի արտադրությունը
- 3) պղնձաձուլությունը
- 4) քիմիական արդյունաբերությունը

36 Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Գ տառով.

- 1) Աժդահակ
- 2) Քաշաթաղ
- 3) Վարդենիս
- 4) Արմաղան



37 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Հ տառով.

- 1) Ջերմուկ
- 2) Վարդենիս
- 3) Եղեգնաձոր
- 4) Վայք

38 Ածխի պաշարներով հարուստ երկրներ են.

- 1) Իրանը և Իրաքը
- 2) Բրազիլիան և Կանադան
- 3) Ավստրալիան և ՀԱՀ-ը
- 4) Ֆրանսիան և Իտալիան

39 Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.

- 1) ջրէկներում էներգետիկ նպատակներով օգտագործված ջրերը
- 2) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
- 3) քիմիական պարարտանյութերը
- 4) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը

40 Բնական միջավայրի այն տարրերը, որոնք օգտագործվում են և կարող են օգտագործվել հասարակական արտադրության գործընթացում մարդու նյութական և հոգևոր պահանջմունքները բավարարելու համար, կոչվում են.

- 1) ֆինանսական ռեսուրսներ
- 2) աշխատանքային ռեսուրսներ
- 3) բնական ռեսուրսներ
- 4) տնտեսական ռեսուրսներ

41 Գրել այն կղզիների և կղզեխմբերի համարները, որոնք Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում են.

- | | |
|-------------------------|----------------------|
| 1) Կուրիլյան | 5) Նյուֆաունդլենդ |
| 2) Կանադական արկտիկական | 6) Նոր Երկիր |
| 3) Նոր Զելանդիա | 7) Սախալին |
| 4) Շայցբերգեն | 8) Հյուսիսային երկիր |

42 **Գրել այն լեզուների համարները, որոնք մտնում են ալթայան լեզվաընտանիքի մեջ.**

- | | |
|--------------|-----------------|
| 1) հինդի | 5) ադրբեջաներեն |
| 2) պարսկերեն | 6) ուզբեկերեն |
| 3) արաբերեն | 7) վրացերեն |
| 4) քրդերեն | 8) իտալերեն |

43 **Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.**

- | | |
|-----------|------------|
| 1) Գետիկ | 5) Հագարու |
| 2) Օլթի | 6) Քասաղ |
| 3) Կարկառ | 7) Տավուշ |
| 4) Մասրիկ | 8) Դեբեդ |

44 **Տրված պետությունները դասավորել ատոմային էլեկտրակենտրոնային արտադրության նվազման կարգով.**

- 1) Ռուսաստան
- 2) ԱՄՆ
- 3) Ուկրաինա
- 4) Ճապոնիա

Աֆրիկայի ջրագրական ցանցի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Նիգերը և Օրանժը հորդանում են ձմռանը:
- 2) Աֆրիկյան գետերը հիմնականում ունեն ձնասառցադաշտային սնում:
- 3) Աֆրիկայի ջրագրական ցանցը ընդհանուր առմամբ բաշխված է հավասարաչափ:
- 4) Աֆրիկայի տարածքի մոտ 1/3-ը հոսք չունի դեպի օվկիանոս:
- 5) Կոնգո գետի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման նպատակներով:
- 6) Նյասան և Տանզանիկան տեկտոնական ծագման լճեր են:

Բ Մակարդակ

46

Երկու կետեր միևնույն միջօրեականի վրա են՝ միմյանցից 5° հեռավորության վրա: Նրանց միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 557 կմ
- 2) 505 կմ
- 3) 555 կմ
- 4) 550 կմ

47

Արագածի գագաթին օդի ջերմաստիճանը -12°C , իսկ նույն պահին ստորոտում՝ $+6^\circ$: Ստորոտի բացարձակ բարձրությունը կլինի (հաշվարկը կատարել 6° -ով).

- 1) 3090 մ
- 2) 990 մ
- 3) 1090 մ
- 4) 2090 մ

48

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օվկիանոսի այն մասերում, որտեղ գոլորշացումը մեծ է, և գետեր չեն թափվում, ջրի աղիությունը միջինից բարձր է:
- 2) Օվկիանոսային տաք հոսանքները նպաստում են կլիմայի ցրտեցմանն ու մթնոլորտային տեղումների նվազմանը:
- 3) Օվկիանոսային սառը հոսանքներից տեղի է ունենում ջրի ակտիվ գոլորշացում:
- 4) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորություններն անվանում են մայրցամաքային լանջ:

49

Ի՞նչը բնորոշ չէ արևադարձային օդային զանգվածներին.

- 1) առանձնանում են փոքր խոնավությամբ և մեծ թափանցիկությամբ
- 2) ձևավորվում են 20° – 40° աշխարհագրական լայնություններում
- 3) բնորոշվում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածության պատճառով)
- 4) ծովային տարատեսակը բնութագրվում է բարձր ջերմությամբ և խոնավությամբ, իսկ ցամաքայինը՝ բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ

50

Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Հյուսիսային Ամերիկայում.

- 1) Թուրանի դաշտավայր, Ռուիս հրաբուխ, Մարակայբո լիճ
- 2) Կենտրոնական հարթավայր, Վինսոն լեռ, Օնեգա լիճ
- 3) Լա Պլատայի դաշտավայր, Կոտոպախի հրաբուխ, Էրի լիճ
- 4) Մեծ ավազան սարահարթ, Առափնյա լեռնաշղթա, Մեծ արջի լիճ

51

Ըստ պետական կառավարման ձևի՝ բացարձակ միապետություններ են.

- 1) Նիդերլանդները և Մեծ Բրիտանիան
- 2) Քուվեյթը և Օմանը
- 3) Ճապոնիան և Դանիան
- 4) Բելգիան և Նորվեգիան

52

Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներ են.

- 1) Կանադան և Ավստրալիան
- 2) Ֆրանսիան և Գերմանիան
- 3) Ռուսաստանը և Ուկրաինան
- 4) Նիգերիան և Եթովպիան

53

Ցորեն արտահանող առաջատար երկրներ են.

- 1) Ինդոնեզիան և Գերմանիան
- 2) ԱՄՆ-ը և Ավստրալիան
- 3) Իսպանիան և Ճապոնիան
- 4) Իտալիան և Վիետնամը

54

Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ֆրանսիային է պատկանում Կորսիկա կղզին:
- 2) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 3) Սահմանակից պետություններից են Լյուքսեմբուրգը և Շվեյցարիան:
- 4) Արևմտյան Եվրոպայում ամենախտաբնակ պետությունն է:

55

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրն իր տարածքով և բնակչության թվով դասվում է աշխարհի գերխոշոր երկրների շարքին: Արևելքում ավերը ողողվում են Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Այն հարուստ է գրեթե բոլոր տեսակի օգտակար հանածոներով: Մակայն անբավարար են վառելիքաէներգետիկ ռեսուրսները: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Արգենտինան
- 2) ԱՄՆ-ը
- 3) Մեքսիկան
- 4) Բրազիլիան

56

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավում տարածվում է Կուր-Արաքսյան դաշտավայրը:
- 2) Հարավ-արևելքում սահմանակցում է Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակին:
- 3) Զբաղեցնում է մոտ 29 հազ. կմ² մակերես:
- 4) Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային գոտում է:

57

ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 2) Հանրապետության տարածքը բարեխառն կլիմայական գոտում է:
- 3) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:
- 4) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:

58

Տավուշի մարզում տնտեսության ո՞ր ենթաճյուղն է բացակայում.

- 1) գորգագործություն և փայտամշակություն
- 2) գինու և պահածոների արտադրություն
- 3) գունավոր մետաղաձուլություն և քիմիական արդյունաբերություն
- 4) հանքային ջրերի արտադրություն և զբոսաշրջություն

59 **Ի՞նչն ընդհանուր չէ Արարատի և Արմավիրի մարզերի համար.**

- 1) Գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանն արհեստական ոռոգումն է:
- 2) Գերիշխում են կուլտուր ոռոգելի հողերը:
- 3) Արդյունաբերության մեջ առաջատար է ատոմային էներգետիկան:
- 4) Բնորոշ են խոշոր գյուղերը:

60 **Ո՞ր շարքում տրված մարզերի համար է գունավոր մետալուրգիան մասնագիտացման ճյուղ.**

- 1) Արմավիրի և Վայոց ձորի
- 2) Գեղարքունիքի և Շիրակի
- 3) Լոռու և Սյունիքի
- 4) Արագածոտնի և Շիրակի

61 **Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի խորության աճման կարգով.**

- 1) Վանա
- 2) Ուրմիա
- 3) Սևանա

62 **Գրել Որոտան գետի վրա կառուցված ջրէկների համարները.**

- | | |
|----------------|-------------|
| 1) Տաթևի | 5) Ողջիի |
| 2) Արգելի | 6) Ձորագետի |
| 3) Արգնիի | 7) Շամբի |
| 4) Սպանդարյանի | 8) Հրագդանի |

63 **Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Գերմանիային.**

- | | |
|--------------|-----------------|
| 1) Էստոնիա | 5) Ուկրաինա |
| 2) Իտալիա | 6) Լեհաստան |
| 3) Շվեյցարիա | 7) Սլովակիա |
| 4) Հունգարիա | 8) Նիդերլանդներ |

64 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բրնձի արտադրությամբ.**

- | | |
|--------------|-------------|
| 1) Չիլի | 5) Չինաստան |
| 2) Բրազիլիա | 6) Իրան |
| 3) ԱՄՆ | 7) Պերու |
| 4) Ինդոնեզիա | 8) Լատու |

65 **Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ³ է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 15 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:**

(66-67) Գետի լայնությունը 12 մ է, միջին խորությունը՝ 0,5 մ: Գետի մեջ զցված խցանը 1 վայրկյանում անցնում է 2 մ տարածություն:

66 *Որոշել գետի հոսքը մեկ ժամում:*

67 *Որոշել գետի ծախսը:*

(68-69) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, իսկ գագաթին՝ 440 մմ.

68 Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

69 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Այլումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 2) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
- 3) ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում Հայկական աէլի բաժինը կազմում է ավելի քան 2/5-ը:
- 4) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 5) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 6) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները: